

Վերապատրաստող կազմակերպություն

ՀՀ ԿԳՄՄՆ <<Մարտունու Տ. Արրահամյանի անվան ավագ
դպրոց>> ՊՈԱԿ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝

Կրտսեր դպրոցականի

ինքնագնահատականը հեքիաթների և խաղերի միջոցով

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈւՍՈՒՑԻՉ՝

ԾՈՎԻՆԱՐ ԳԱԼՍՅԱՆ

ԴՊՐՈՑ՝

Գեղհովիտի թիվ 2-րդ միջնակարգ

դպրոց

Մարտունի 2022

Բովանդակություն

Ներածություն.....	3
Թեմայի արդիականություն.....	4
Գլուխ 1. Ինքնագնահատականի էությունը, դրա ձևավորման վերաբերյալ տեսական մոտեցումները.....	6
Գլուխ 2. Ինքնագնահատականի ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում.....	9
Գլուխ 3. Հետազոտական մաս.....	12
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	18
Հավելված.....	19
Դասապլան 1.....	19
Դասապլան 2.....	21

Ներածություն

Ա. Ի. Սավենկովն ասել է, որ ուսուցումը պետք լինի պրոբլեմային: Այն պետք է պարունակի ինքնուրույն հետազոտական գործունեության տարրեր, կրի անհատական ստեղծագործական բնույթի որոնումների կնիքը: Այդ դեպքում կրթությունը ոչ թե սուկ վերարտադրողական բնույթ կկրի, այլ կվերածվի ստեղծագործական գործունեության, որտեղ երեխան գնահատի իր ձեռքբերումները: Նման իրավիճակներում կաշխուժանան երեխաների շփումներն ինչպես հասակակիցների, այնպես էլ մեծահասակների հետ, և նրանց մեջ կձևավորվի դրական կենսափորձ ու անձնային նոր որակներ:

Ներկայումս բազմաթիվ հետազոտողներ, մանկամարժներ, հոգեբաններ ուսումնասիրել են ինքնագնահատականի ձևավորման հիմնախնդիրը: Շատերն են դիտարկել «Ես» կոնցեպցիայի ենթատեքստում: Սակայն գրականության վերլուծությունը թույլ է տալիս փաստելու, որ դեռևս անհրաժեշտություն կա ուսումնասիրել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման դրսևորման առանձնահատկությունները, թե որքանով է մանկավարժական աշխատանքներն ու մեթոդները նպաստում դրա ճիշտ ձևավորմանը:

Թեմայի արդիականություն

Մարդու սոցիալական կյանքի կարևորագույն բնութագրումներից մեկը վերաբերումնքն է սեփական անձի նկատմամբ: Գրականության մեջ գոյություն ունեցող կարծրատիպային կարծիքը, որ «ինքնագնահատական» երևույթը հարկավոր է ուսումնասիրել անձի հոգեբանության սահմանների ներսում: Մինչդեռ ակնհայտ է, որ ինքնագնահատականը լիարժեք սոցիալական երևույթ է և վերջինիս ուսումնասիրությունը սոցիալական հոգեբանության և մանկավարժության սահմաններում բացահայտում է տվյալ երևույթի հասկացման նոր տեսանկյուններ:

Գիտական աղբյուրների վերլուծությունը ինքնագնահատականի հարցի շուրջ ցույց է տալիս, որ այն բավարար չափով և խորությամբ չի ուսումնասիրվել: Որոշ հեղինակներ անդրադարձել և ուրույն կարծիք են հայտնել այս հարցի վերաբերյալ:

Այդ իսկ պատճառով, առավել քան երբևէ, այսօր անհրաժեշտություն է առաջացել բացահայտել և վերլուծել ինքնագնահատականը որպես սոցիալ- հոգեբանական երևույթ, որը կարող է ոչ միայն տեսական, այլև գործնական կարևոր նշանակություն ունենալ:

Ինքնագնահատականը կրտսեր դպրոցականի մոտ միայն սոցիալ- հոգեբանական երևույթ լինելով հանդերձ կարող է ծրագրավորել ինչպես վարքի բնույթը , այնպես էլ ինքնաճանաչման առանձնահատկությունները:

Մենք ինքնագնահատականը դիտարկում ենք տարիքային փուլերի զարգացման սոցիալ- հոգեբանական տեսանկյունից: Հետաքրքիր կերպով է ներկայանում կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ուսումնասիրությունը որոնումների և կյանքի իմաստի ձեռքբերման տեսանկյունից: Ինքնագնահատականը մի գործընթաց է, որը տեղ է գտնում տարիքային բոլոր փուլերում, մեկ տարբերությամբ՝ արդյոք այն գիտակցաբար, թե ոչ գիտակցաբար է ընթանում: Այս տեսանկյունից դիտարկված այս գործընթացն ինչպես արդիական է, այնպես էլ նոր և անընդհատ ուսումնասիրության կարիք ունի:

Հետազոտության օբյեկտ է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման առանձնահատկությունները:

Հետազոտության առարկան է կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի ձևավորման հարցում մանկավարժական աշխատանքների դերը:

Հետազոտության նպատակն է՝

1. Բացահայտել կրտսեր դպրոցականի ինքնագնահատականի զարգացման օրինաչափությունները:
2. Առաջարկել սեփական մոտեցումը և մեկնաբանությունն ինքնագնահատականի զարգացման սոցիալ- հոգեբանական գործընթացի վերաբերյալ:

Հետազոտության վարկած

1. Ենթադրվում է, որ կրտսեր դպրոցականները ունեն ցածր ինքնագնահատական:
2. Ենթադրվում է, որ մանկավարժական աշխատանքները կարող են նպաստել կրտսեր դպրոցականի ինքնագնահատման կարողության ձևավորման հարցում:

Հետազոտության հիմնական խնդիրներն են՝

Ուսումնասիրել ինքնագնահատականի վերաբերյալ գիտա-մեթոդական գրականություն, ուսումնասիրել կրտսեր դպրոցականի մոտ ինքնագնահատման կարողությունների ձևավորման առանձնահատկությունները, մշակել մեթոդներ, որոնք կնպաստեն կրտսեր դպրոցականի մոտ ադեկվատ ինքնագնահատականի ձևավորմանը:

Հետազոտության մեթոդներն են՝

- Գիտական գրականության վերլուծություն
- Դիտում
- Զրույց
- Թեստավորում

Հետազոտության մեթոդիկաները.

Հետազոտության անցկացման համար կիրառվել են հետևյալ երկու մեթոդիկաները՝ **Հեքիաթներ.** <<Հեքիաթ ոգնի Վիտյայի մասին>>, <<Հավատալ և աշխատել>>, <<Խիզախ նապաստակը>>

Խաղեր

ԳՐԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԳԼՈՒԽ 1. Ինքնագնահատականի էությունը, դրա ձևավորման վերաբերյալ տեսական մոտեցումները

Իր կենսագործունեության գործընթացում մարդը, որպես սոցիալական էակ, ստանում է իր վարքի կամ գործողությունների գնահատականը՝ ինչպես շրջապատող մարդկանց կողմից, որոնք կարևոր տեղ են զբաղեցնում այդ մարդու համար, այնպես էլ հասարակությունից առհասարակ: Անձի կյանքի ընթացքում այդպիսի գնահատականների հիմքում է ձևավորվում ինքնագնահատականը, որը էականորեն ազդում է մարդու հոգեկան այնպիսի ակտիվության վրա, ինչպիսին է ինքնակառավարումը, ինքնակարգավորումը: Մարդու ինքնագնահատականը հանդիսանում է նաև <<Ես>> կոնցեպցիայի կարևորագույն բաղադրիչ, իսկ ավելի կոնկրետ հանդիսանում է նրա գնահատողական մասը, կողմը: Ինքնագնահատականը հոգեբանության մեջ ընկալվում է որպես անձի սուբյեկտիվ գնահատական: Ինքնագնահատականը այն է, ինչ մենք մտածում ենք մեր մասին: <<Ես>> կոնցեպցիան հանդիսանում է անձի միջուկը և հիմնվում է իր մասին գիտելիքների վրա, որոնք ձեռք են բերվել անձի ամբողջ կյանքի ընթացքում:

Կյանքի ընթացքում ինքնագնահատականը (մարդու, իր, իր որակների, հնարավորությունների և ուրիշների հետ համեմատության գնահատականը), հանդիսանալով անձի միջուկը՝ մեծագույն կարգավորող դեր է խաղում անձի վարքի և գործողությունների մեջ: Հենց դրանից է կախված այն, թե մարդը կապրի արդյոք

շրջապատող աշխարհի հետ ներդաշնակության մեջ և թե որքան հաջողված նա կկառուցի փոխհարաբերությունները ուրիշների հետ:

Ինքնագնահատականը ազդում է երեխայի կյանքի բոլոր ոլորտների վրա, ինչպես նաև կենսական նշանակություն ունեցող ոլորտների:

Երբեմն ինքնագնահատականի մասին խոսում են,ինչպես գնահատման գործընթացի: Սակայն հաճախ ինքնագնահատական ասելով հասկանում ենք գնահատման արդյունքը, վերջնական կարծիք կամ զգացողություն իր մասին:

Ինքնագնահատականի աղբյուր է հանդիսանում սեփական կերպարը: Այն կազմավորվում է <<Ես>>անհատի համեմատության ներքո՝ իրական և իդեալական (այն ինչպիսին մարդը կա հիմա իր ընկալման մեջ և ինչպիսին նա կուզեր լինել, որպեսզի փոխվի դեպի լավը): Անցումը անհատի արտաքին գնահատականից դեպի ներքին գնահատականը կոչվում է ինտերիորիզացիա: Յուրաքանչյուր անհատի յուրահատուկ է այն, թե ինչպես է նա գնահատվում ուրիշների կողմից:Գոյություն ունի այսպես ասած սեփական լավ արդյունքների գնահատում: Այստեղ ինքնագնահատականը արտահայտվում է անձի գիտակցության մեջ ձեռքբերումների և դրանց գնահատման արդյունքում՝ անձը բավարարված է կամ բավարարված չէ այդ իր հասած արդյունքներով:

Հոգեբանության մեջ առաջին անգամ ինքնագնահատականի էության ուսումնասիրման մասին լուրջ փորձեր է արել ամերիկացի հոգեբան և փիլիսոփա Ուիլյամ Ջեյմսը, որը իր աշխատություններից շատերը նվիրել է <<Ես>> կոնցեպցիայի մշակումներին: Ջեյմսը կարծում էր, որ մարդու ինքնագնահատականը կարող է լինել ինքնաբավարարվածության և չբավարարվածության արդյունք: Ինքնաբավարարվածություն, որն իր դրսևորումն է գտնում հպարտության, ամբարտավանության և ունայնության մեջ: Իսկ չբավարարվածության ներքո ինքնագնահատականը դրսևորվում է ամոթխածության, ամաչկոտության, անինքնավստահության, զղջման, հիասթափության և իր պարտության գիտակցության մեջ: (Ջեյմս) Ռուբինշտեյնը ինքնագնահատականի մեջ տեսնում էր առաջին հերթին արժեքներ:(Ռուբինշտեյն) Ա. Ն. Լեոնտևայի կարծիքով ինքնագնահատականը կարևոր

պայման է, որը հնարավորություն է տալիս անհատին դառնալ անհատականություն:(
Լեոնտևա)

Ինքնագնահատականի խնդրին վերաբերող հիմնական տեսական մոտեցումների վերլուծությունը թույլ է տալիս առանձնացնել հիմնական դրույթներ, որոնք օգնում են հասկանալու դրա էությունը: Հետևաբար առանձնացնում ենք ինքնագնահատականի մի շարք առանձնահատկություններ: Քննարկենք այդ առանձնահատկություններն առանձին-առանձին: Ինքնագնահատականը հանդիսանում է <<Ես>> կոնցեպցիայի մի մաս և գտնվում է սերտորեն կապի մեջ նրա այլ մասերի հետ՝ ինքնավերաբերմունք, ինքնաճանաչում, և ինքնակարգավորում: Ինքնագնահատականի հիմքում ընկած են գնահատականներն ու հույզերը: Ինքնագնահատականը հանդիսանում է վարքի և գործունեության ինքնակարգավորիչ: Ինքնագնահատականը կարելի է ուսումնասիրել որպես գրծընթաց և արդյունք:

Փաստորեն՝ ինքնագնահատականը կատարում է բազմաթիվ ֆունկցիաներ և հատկապես կարգավորող, պաշտպանական, զարգացնող:

Ինքնագնահատականը բնութագրվում է բարձր, միջին և ցածր մակարդակներով:

Կախված իրատեսական լինելուց կարելի է նշել ադեկվատ և ոչ ադեկվատ ինքնագնահատական , որոնց մեջ առանձնացվում են բարձրացված և իջեցված ինքնագնահատականները: Կախված կառուցման առանձնահատկություններից կարելի է նշել կոնֆլիկտային և ոչ կոնֆլիկտային կամ այլ կերպ ասած կոնստրուկտիվ՝ կառուցողական, և ոչ կոնստրուկտիվ՝ ապակառուցողական: Առանձնացնում են ինքնագնահատման կախված կայունության աստիճանից՝ կայուն և անկայուն: Ամենից հաճախ գրականության մեջ հանդիպում են ինքնագնահատականի հետևյալ տարբերակումները՝ իջեցված, միջին կամ ադեկվատ և բարձրացված: Այս բոլոր մակարդակները ձևավորվում են շրջապատի գնահատականների ազդեցության ներքո, որը հետագայում վերածվում է անձի ինքն իր նկատմամբ ինքնագնահատականի: Անձի համար ամենաօպտիմալ մակարդակը ադեկվատն է, որի դեպքում անձը իր հնարավորությունները, գործողությունները, վարքը, բնավորության գծերը կամ անձնային որակները ճիշտ, ռեալ է գնահատում:

ԳԼՈՒԽ 2. Ինքնագնահատականի ձևավորումը կրտսեր դպրոցական տարիքում

Հայտնի հոգեբան Լ. Ս. Վիգոտսկին ենթադրում էր, որ հենց յոթ տարեկան հասակում է սկսվում ձևավորվել ինքնագնահատականը: Հատկապես կրտսեր դպրոցական տարիքում է ինքնագնահատականը ստանում իր զարգացումը, որին նպաստում է ուսումնական գործունեությունը, որը դիտարկվում է նոր տեսանկյունից՝ աշակերտի տեսանկյունից: Նա վերոնշյալի ներքո դիտարկում էր նոր հոգեբանական ուսուցումը՝ ռեֆլեքսիան, որը երեխայի մոտ նոր-նոր սկսում է ձևավորվել: Հենց այս շրջանում է երեխան կուտակում գիտելիքներ ինչպես իր, այնպես էլ շրջապատի մասին:

(Дубровина И. В. Практическая образования. Учебное пособие 4-е изд. Под редакцией Дубровиной –СПБ.: Питер, 2004-592с)

Լիպինան այս շրջանի առանձնահատկությունը համարում էր այն, որ կրտսեր դպրոցական տարիքի երեխաների մոտ հանդես են գալիս ինքնագնահատականի բոլոր տեսակները՝ ադեկվատկայուն, բարձրացված կայուն, ոչ կայուն դեպի ցածր կամ իջեցված, որոնք էլ իրենց հերթին ունեն իրենց յուրահատկությունները:

(Липкина А. И. Самооценка школьника / А. И. Липкина. - М. 1999-382с)

Կրտսեր տարիքի դպրոցականի մոտ ինքնագնահատականը առավել քան մեծահասակի մոտ, ենթարկվում է ներգործության և փոփոխությունների: Տարրական դասարաններում սովորող երեխաների ինքնագնահատականը իր յուրահատուկ արտացոլումն է գտնում նրա ապագայի նկատմամբ պատկերացումներում: Լ. Ս. Վիգոտսկայի աշխատություններում հաստատվում է, որ բարձրացված ինքնագնահատականը բնորոշ է առաջին դասարաններում: Սակայն մեծանալուն զուգընթաց կրտսեր դպրոցականները սկսում են իրենց և շրջապատող աշխարհը ճիշտ գնահատել

[Кислицкая Л. А. Особенности самооценки первоклассников, готовых и не готовых к школьному обучению / Л.А. Кислицкая –М.МГППУ, 2006-320с].

Երեխան չի ծնվում ինչ-որ վերաբերմունքով ինքն իր նկատմամբ: Ինչպես անձի այլ առանձնահատկություններ, նրա ինքնագնահատականը ևս ձևավորվում է դաստիարակման գործընթացում, որի հիմնական դերը պատկանում է ընտանիքին և կրտսեր դպրոցին:

Մեծ նշանակություն ունի ընտանեկան դաստիարակման ոճը, ընտանեկան արժեքները: Երեխաները, ովքեր ունեն բարձրացված ինքնագնահատական դաստիարակվում են որպես ընտանիքի կուռքի: Նրանց նկատմամբ բացակայում է քննադատողական վերաբերմունքը և վաղ են գիտակցում իրենց բացառություն լինելը: Այն ընտանիքներում, որտեղ մեծանում են բարձր, բայց ոչ բարձրացված ինքնագնահատականով, երեխայի անձի նկատմամբ, դարձվում է մեծ ուշադրություն, սակայն ծնողները լինում են նաև բավականաչափ պահանջկոտ: Այստեղ չեն դիմում ստորացուցիչ պատիժների և միայն զովում են, երբ երեխան իսկապես արժանի է լինում: Ցածր ինքնագնահատականով երեխաները տանը մեծ ազատություն են ունենում, սակայն այդ ազատությունն ըստ էության անվերահսկողություն է, ավելի շատ երեխաների նկատմամբ ծնողները անտարբերություն են ցուցաբերում: Այս երեխաների ծնողները ներգրավում են երեխայի կյանքում, երբ առաջանում է իրական խնդիրներ, որոնք հիմնականում կապված են լինում առաջադիմության հետ: Նրանք սովորաբար քիչ են հետաքրքրվում երեխայի ապրումներով և հետաքրքրություններով:

Ցածր ինքնագնահատականը թույլ չի տալիս, որ դպրոցականի հնարավորությունները լիովին բացահայտվեն: Իսկ շատ բարձր կարիքն իրենց մասին կարող է բավականաչափ վտանգավոր լինել՝ երեխան կարող է իրեն վերագրել գոյություն չունեցող արժեքներ և ոչ իրական հեռանկարներ, իսկ հետո ապագայում սառապել, երբ կյանքը ամեն ինչ իր տեղը սկսի դնել:

Հարկ է նշել, որ իջեցված և բարձրացված ինքնագնահատականները պատկանում են ոչ օպտիմալ մակարդակին:

Ինքնագնահատականի ձևավորումը սկսվում է դեռ նախադպրոցական ժամանակահատվածից և ամենամեծ ազդեցությունն այդ գործընթացում ունենում են ծնողներն ու շրջապատողները: Այսպիսով՝ մեծահասակները անգիտակցաբար կարող

են երեխայի մոտ ձևավորել իջեցված ինքնագնահատական, եթե չվստահեն նրանք, մշտապես շետադրեն երեխայի անկարողությունը կամ անպատասխանատվությունը ինչ-ինչ հարցերում, օրինակ՝ չվերցնես հեռախոսը, քանի որ կկոտրես, մի արա չես կարող: Կամ էլ հակառակը՝ երեխայի ինքնագնահատականը կարող է ձևավորվել բարձրացված ձևով, եթե ծնողները չափից շատ գովեն երեխային՝ չափազանցնելով նրա ընդունակությունները և արժանիքները:

Երեխայի ինքնագնահատականը ձևավորվում է մի շարք գործոններով պայմանավորված: Նշենք գործոններից մի քանիսը: Ինքնագնահատականի ձևավորման գործընթացում մեծ կարևորություն ունի ծնողների ազդեցությունը, նրանց գնահատականը և անձնային օրինակը, զանգվածային տեղեկատվության միջոցները, տեղեկատվական տեխնոլոգիաները: Անհերքելի ազդեցություն է ունենում երեխայի վրա նաև սոցիալական շրջապատը, կրթական կառույցները՝ նախադպրոցական հաստատություն, դպրոց, բարձրագույն հաստատությունները, դաստիարակությունը, երեխայի անհատական առանձնահատկությունները, ինտելեկտուալ զարգացվածության մակարդակը: Կարևոր է երեխայի անձի ուղղվածությունը և նրա պահանջների մակարդակը:

Կրտսեր դպրոցական տարիքում ինքնագնահատականի զարգացումը կատարվում է առաջատար գործունեության ազդեցության ներքո՝ ուսուցում, որը հիմնականում կատարվում է դպրոցում: Հատկապես ուսուցչի գնահատականի ազդեցության ներքո, նրա հաստատման կամ չընդունման դեպքում սկսում է ակտիվ ձևավորվել երեխայի ինքնագնահատականը: Ինքնագնահատականի ձևավորման հարցում կարելի է նշել նաև ընտանիքի, դպրոցի, ռեֆերենտային խմբի, անձնային շփման դերը:

Այսպիսով կարող ենք ասել, որ անձի ինքնագնահատականի ձևավորումը տեղի է ունենում ի շնորհիվ ինտերիորիզացիայի (ներքնայնացում): Այն հաստատուն չէ, քանի որ դինամիկ է և փոփոխվում է տարբեր գործոնների ազդեցությունների, կյանքի հանգամանքներից և իրականության պայմաններից:

Այսպիսով՝ ամփոփելով կարող ենք ասել, որ մեծահասակները անգիտակցաբար կարող են կրտսեր դպրոցականի մոտ ձևավորել իջեցված ինքնագնահատական, կամ

Էլ հակառակը՝ երեխայի ինքնագնահատականը կարող է ձևավորվել բարձրացված ձևով, եթե ծնողները չափից շատ գովեն երեխային՝ չափազանցնելով նրա ընդունակություններն ու արժանիքները:

Գլուխ 3. Հետազոտական մաս

Հետազոտությունս իրականացվել է Գեդեմիտի 2-րդ միջնակարգ դպրոցի կրտսեր տարիքի երեխաների հետ: Հետազոտմանը մասնակցել են 35 կրտսեր դպրոցականներ: Հետազոտությունն անցկացվել է երեք իրար հետ փոխկապակցված փուլերով.

- Կազմակերպչական փուլ
- Փորձարարական փուլ
- Ամփոփիչ փուլ

Հետազոտությունն անցկացվել է խմբային մեթոդով: Երեխաների հետ իրականացրել են Ռոջերսի անձի ինքնագնահատականի մակարդակը բացահայտող թեստը: Առկա են քսան պնդումներ, որոնց երեխաները պետք է գնահատեն երկու տեսանկյունից: Առաջինը նրանք մեկից քսանը պետք է գնահատեն իրենք իրենց աչքերով տվյալ հատկությունը և երկու փուլով՝ ըստ նրանց շրջապատը ինչպես է գնահատում:(Տես հավելված 1):

Հետազոտության իրականացման համար ընտրված մեթոդներից է եղել նաև դիտումը: Դիտման նպատակն է եղել հասկանալու կրտսեր դպրոցականի վարքը դպրոցական միջավայրում: Դիտարկումներն արվել են և՛ դասաժամերի ընթացքում, և՛ դասամիջոցներին: Հատկապես մեծ տեղեկատվություն է տվել դասամիջոցների ընթացքում դիտարկումները: Դիտարկումներից պարզ երևում է նրանց խնքնագնահատականի ներգործությունը: Հետազոտվողներից տասներեքն ունեին


բացառապես պասիվ դիրք: Չէին շփվում հասակակիցների հետ: Դասերի ընթացքում ակտիվություն չէին ցուցաբերում՝ հանգիստ նստած էին և հետևում էին դասի ընթացքին: Իմ՝ իրենց ուղղված հարցերի դեպքում միայն պատասխանում էին ոչ միանգամից: Մտածում էին դանդաղ և խոսքը շարադրում էին ոչ սահուն կերպով: Մակայն հարկ եմ համարում նշել, որ նրանց պատասխանները լինում էին ճիշտ: Դասամիջոցներին ևս նրանք իրենց նստարաններից չէին հեռանում: Ջբաղվում էին ինչ-որ գործով կամ ուղղակի հետևում էին մնացած երեխաներին: Երբեմն զարմանում էին, երբ դասամիջոցին մոտենում էի նրանց ու հարց ուղղում: Նրանց այդ վարքից պարզ էր, որ մյուս աշակերտները նրանց դասարանում չեն ներգրավվում գործունեության մեջ: Քսաներկու աշակերտների դեպքում պատկերն այլ էր: Նրանք ակտիվ էին դասաժամերին, պատասխանում էին հարցերին, լսում ու հետևում էին դասապրոցեսին:

Դասամիջոցներին դուրս էին գալիս իրենց տեղից, շրջում դասարանում և կրկին վերադառնում: Իսկ այստեղ պետք է նշեմ, որ երբ դասընկերները փորձում էին զրուցել կամ որևիցե իրով փոխանակվել, նրանք պատրաստակամ էին, օգնում էին, եթե լինում էր անհրաժեշտություն: Այստեղից էլ կազմակերպվեց հետագա աշխատանքի ընթացքը:

Դիտարկումը հիմք ծառայեց ամրապնդելու արդյունքները հարցաթերթիկի մեթոդով: Հարցաթերթիկի լրացմանը մասնակցեցին կրտսեր դպրոցականների մայրերը: Հարցաթերթիկի նպատակն էր ՝ բացահայտել նրանց շփումները հասակակիցների և ընտանիքի անդամների հետ:

Դիտարկել էմ այն տեսանկյունից, որ եթե կարողանում են շփվել կամ համագործակցել շրջակա միջավայրի ու մարդկանց հետ, ուրեմն ադեկվատ կամ բարձր է նրանց ինքնագնահատականը և հակառակը: Որքան ցածր է ինքնագնահատականի մակարդակը, այնքան վարքագծում և շփումներում նկատվում է պասիվություն: Ներողամտությունը ևս սերտորեն կապված է ինքնագնահատականի հետ: Որքան ցածր է այն, այնքան ակնառու է ներողամտություն հատկությունը: Հարցաթերթիկի պատասխաններից պարզ դարձավ, որ ընտանիքում գերխնամքի առկայություն կա

հատկապես տղա երեխաների հանդեպ: Նրանք անում են ցանկացած գործողություն երեխաներին բավարարելու համար՝ նույնիսկ տարրական կենցաղային գործողություններ, նրանք ինքնուրույն ջուր չեն գնում խմեն, իրենց համար բերում էին:



Գծապատկեր 1. Ցածր ինքնագնահատականի դրսևորումները գործունեության մեջ

Բարձրացված ինքնագնահատականի մակարդակը կարելի է կապել հենց գերխնամքի ազդեցության հետ: Այս երեխաները ընտանիքում միակ երեխաներն են, չունեն հարազատ քույրեր կամ եղբայրներ: Մնացած երեխաներն ընտանիքում ունեն քույրեր կամ եղբայրներ: Հասկանալու համար, թե ինչու են այս երեխաների մոտ արդյունքները գրանցվել բարձրացված ինքնագնահատական , ծնողների հետ կազմակերպեցի գրույց: Արդյունքում պարզվեց, որ ծնողներն արհեստականորեն ներդրել էին դրական վերաբերմունք իրենց նկատմամբ: Ցանկացած արարքի դեպքում երեխաները արժանացել էին մեծ ուշադրության և գովեստի: Փաստորեն նրանց մոտ ձևավորվել էր ադեկվատ՝ բարձրացված ինքնագնահատական: Այս երեխաները խմբային աշխատանքներում աչքի էին ընկնում ամաչկոտությամբ, երկչոտությամբ:

Համադասարանցիների արդյունքներն այլ էին: Նրանց մեծամասնության մեջ գերակշռում էին միջին և բարձր ինքնագնահատականները: Կազմակերպեցի նաև ծնողների հետ հանդիպումներ, որոնց նպատակն էր տեղեկացնելու ծնողավարության հմտությունների մասին: Գերխնամքի կամ խնամքի պակասի ազդեցությունը երեխայի զարգացման և մասնավորապես ինքնագնահատման կարողությունների ձևավորման

գործընթացում: Հետաքրքիր փաստ արձանագրվեց ծնողների հետաշխատանքներում. նրանք բոլորն էլ առանձին-առանձին ուզում էին տեղեկություն ստանալ:


Ռուսերենի դասաժամին աշակերտների հետ իրականացվել է հեքիաթաթերապիա: Հեքիաթներն ընտրվել են ըստ ուղղվածության և նպատակի: «Հեքիաթ ոգնի Վիտյայի մասին», այն նախատեսված է 4-9 տարեկան երեխաների համար և նպատակն է՝ հասակակիցների հետ փոխհարաբերություններում դժվարությունների, թերարժեքության զարգացման հաղթահարում: Երբ հարցեր էի ուղղում աշակերտներին, նրանք պատասխանում էին, որ գրել չգիտեն, վախենում են սխալ պատասխանեն: Սա խոսում է այն մասին, որ առաջին դասարանցիների մոտ սկզբնական շրջանում միջավայրի փոփոխության, վախի խնդիրները չեն հաղթահարվել: Անց եմ կացրել «Հավատալ և աշխատել» հեքիաթը՝ նախատեսված 6-10 տարեկան երեխաների համար, որի նպատակն է հաղթահարել թերարժեքության զգացումը, սովորելու դժվարությունները, կապված վախի և անվստահության զգացումի հաղթահարման հետ: Դասամիջոցներին և ֆիզկուլտուրայի դասաժամերին խաղաթերապիա եմ անցկացրել: Ընտրվել է 16 խաղ, որոնց նպատակները տարբեր էին՝ ձևավորել ինքնահարգանք սեփական անձի նկատմամբ, ընկալել սեփական առավելությունները, կարողանալ ձևավորել երեխայի մոտ «Ես»-ը, գնահատել սեփական արժանիքները, ճանաչել թերությունները: Խաղերի սկզբում ցուցաբերում էին քիչ ակտիվություն, ապա պատկերը այլ էր:

Խնդիրների հաղթահարման, երեխաների աղեկվատ ինքնագնահատականի ձևավորման հարցում մեծ նշանակություն ունի համալիր, փոխհամաձայնեցված համագործակցությունը:

Այսպիսով՝ կրտսեր դպրոցական տարիքը երեխաների ինքնագնահատականի ձևավորման համար առաջատար դեր ունի, քանի որ որպես այդպիսին կարելի է համարել առաջնային սոցիալական ինստիտուտներից մեկը, որտեղ երեխան պետք է կարողանա ճիշտ կերպով դրսևորել իրեն:

Հետազոտական արդյունքներն հաստատում են, որ մարդու ինքնագնահատականը ձևավորվում է մոտ 5-6 տարեկանում, որտեղ գլխավոր դեր ունեն փոքրիկի ծնողները:

Արդիական է դառնում այն փաստը, որ մարդու հոգեկան զարգացման աստիճանի հետ ինքնագնահատականը զատվում է սոցիալական կախյալությունից և ձեռք է բերում անձի հոգեբանական սեփականության կարգավիճակ:



Գծապատկեր 2

- Բարձրացված անկայուն ինքնագնահատական
- Ցածր կայուն ինքնագնահատական
- Ցածր անկայուն ինքնագնահատական
- Բարձրացված կայուն ինքնագնահատական

Եզրակացություն

Ուսումնասիրելով մասնագիտական գրականությունը և ամփոփելով հետազոտության արդյունքները՝ հանգել եմ հետևյալ եզրակացությունների.

1. Ուսումնասիրվող հիմնահարցը շատ արդիական է: Չնայած այս հիմնահարցին մեծ ուշադրություն են դարձնում գիտահետազոտական գրականությունում, կա անհրաժեշտություն այս հիմնահարցի խորը և բազմակողմանի ուսումնասիրության:
2. Կրտսեր դպրոցական տարիքն ու ինքնագնահատականը գտնվում են փոխադարձ հարաբերակցության և կապվածության մեջ:
3. Կրտսեր դպրոցական տարիքը երեխաների ինքնագնահատականի ձևավորման համար առաջատար դեր ունի, և այն առաջնային սոցիալական ինստիտուտներից մեկն է, որտեղ երեխան պետք է ճիշտ դրսևորի իրեն:
4. Մանկավարժահոգեբանական աշխատանքները կարևոր են իրականացնել ոչ միայն երեխաների, այլ նաև ծնողների հետ:
5. Թե՛ բարձր, թե՛ ցածր ինքնագնահատականի տեր մարդիկ հոգեբանորեն վարակում են շրջապատողներին և ստիպում են, որ իրենց հանդեպ հատուկ վերաբերմունք ստեղծվի:

Օգտագործված գրականության ցանկ

1. Մանկավարժություն. Դասագիրք մանկավարժական բուհերի ուսանողների համար:
2. Ռ. Ն. Ազարյանի և Ա. Վ. Ավագյանի խմբագրությամբ, Երևան, էջ197
2. Кислицкая Л. А. Особенности самооценки первоклассников, готовых и не готовых к школьному обучению / Л.А. Кислицкая –М.: МГППУ, 2006-320с/.
3. Գյուլամիրյան Ջ. Հ. <<Խաղալով սովորենք>> Երևան, <<Զանգակ-97>> 2009, էջ 80
4. Ա. Ալեքսանյան <<Պրակտիկ Հոգեբանություն>> Բուն TV, 2018 Երևան
5. Սմիրնով Ս. Դ. Բարձրագույն կրթության մանկավարժություն և հոգեբանություն: Գործունեությունից մինչև անհատականություն` դասագիրք, Մոսկվա 2001թ.
6. Дубровина И. В. Практическая образования. Учебное пособие 4-е изд. Под редакцией Дубровиной –СПБ.: Питер, 2004-592с

ՀԱՎԵԼՎԱԾ

Դասապլան 1

Ուսուցիչ՝ Ծովինար Գալստյան

Առարկա՝	Ռուսաց լեզու	Ամսաթիվ	15.03.2022	Կիսամյակ	II	Դասարան	IV
Թեմա՝	Д. Н. Мамин-Сибиряк «Сказка про храброго Зайца – Длинные Уши, Косые Глаза, Короткий Хвост»						
Օգտագործվող նյութեր	<i>Учебник, презентация, карточки (для составления сказки), аудио запись сказки.</i>						
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> • Формирование самооценки младшего школьника. • Познакомить детей со сказкой • Пазвивать умение пересказывать близко к тексту • Воспитывать отрицательное отношение к лени и невнимательности к проблемам окружающих. • Продолжить работу над использованием аудио и видеозаписи, которая мобилизует эмоциональную память и вызывает интерес. 						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքներ	<p>Ученики могут:</p> <ul style="list-style-type: none"> • коллективно обсуждать прочитанное, доказывать свою точку зрения, опираясь на текст произведения, • определять последовательность событий, осознавать их причины и следствия • формулировать несложные выводы, основываясь на содержании текста 						
Գործողություններ(Ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն	Ուսումնական գործունեություն		Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ (ներ)	
	<i>Աշակերտներ</i>	<i>Ուսուցիչ</i>					

5րոպե-սկիզբ	Прозвенел звонок, Ученики готовятся к уроку.	Учитель настроит учащихся на работу и проверяет домашнее задание.		
10րոպե-ընթացք	Ученики готовятся в р. чтению скороговорку.	Речевая разминка.	<ul style="list-style-type: none"> • Кто является автором этой сказки? • Кто был главным героем сказки? 	
15րոպե	Ученики послушают биографию Мамина-Сибиряка и сказку.	Подготовка к чтению нового произведения известного сборника “Аленушкины сказки”.	<ul style="list-style-type: none"> • Какую черту характера высмеивал автор? • Зачем автор придумал сказку про храброго зайца и рассказал ее Аленушке? 	<p><i>Групповая работа</i></p> <p><i>Метод допросов</i></p> <p><i>Мозговой штурм</i></p>
10րոպե	Слушают и отвечают на вопросы учителя. На карточках собируют название сказки и работают по парам.	Учитель включает аудиозапись, потом задает вопросы. Раздает карточки со словами.		
5 րոպե-ավարտ		Сообщение разъяснение содержания домашнего задания.		
Տն. Աշխատանք	М.Н Толстой “З медведь”, пересказ отрывок. С.В. Михалков “Услужливый заяц” читать отрывок.			

--	--	--	--	--

Դասապլան 2

Ուսուցիչ՝ Ծովինար Գալստյան

Առարկա՝	Ռուսաց լեզու	Ամսաթիվ	20.03.2022	Կիսամյակ	II	Դասարան	III
Թեմա՝	Ինքնագնահատականը զարգացնող հեքիաթ-խաղ						
Օգտագործվող նյութեր՝	<i>Դիտարկիչ նյութեր, անհատական քարտեր՝ նապաստակի, գայլի, բանջարեղենի:</i>						
Դասի նպատակը՝	<ul style="list-style-type: none"> • Ճանաչողության զարգացում • Հեքիաթ-խաղի միջոցով հարստացնել երեխաների բառապաշարը • Չարգացնել ինքնագնահատականը • Ընդլայնել երեխաների մտահորիզոնը 						
	Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ						
Վերջնարդյունքները	<ul style="list-style-type: none"> • Կարողանալ բառերի միջոցով արտահայտել իրենց զգացմունքները • Նրանց մոտ ստացվեց համագործակցային աշխատանքը • Խաղի միջոցով ներգրավեցին պասիվ աշակերտներին • Թոթաձեցին հուզական լարվածությունը խմբում 						
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ		Կիրառվող մեթոդ (ներ)		
3-5րդայե-սկիզբ	Մտազրոհ մեթոդով վերհիշեցին անցածը և ստուգեցին տնային հանձնարարությունը :	Ստուգում է տնային հանձնարարությունը և աշակերտների ուշադրությունը դարձնում է դասի բուն նպատակին:					

<p>20-25րոպե- ընթացք</p>	<p>Խաղի միջոցով ծանոթանում են խաղ-հեքիաթին: Կշռադատման փուլում երեխաները իրենց անհատական քարտերով ուսումնասիրում են պատկերները և իրենց տեսրերում նկարում այն: Աշակերտները կրկնում են կենդանիների ռուսերեն անունները և ցույց տալիս քարտերը:</p>	<p>Հետևեց խաղին, ամրապնդեց նյութը և անհատական քարտերի միջոցով ծանոթացնում է հեքիաթի հերոսներին և հանձնարարում պատկերել նրանց: Ռուսերենով ասում է կենդանիների անունները:</p>	<p><i>• Ի՞նչ ընտանի և վայրի կենդանիների գիտեք:</i></p> <p><i>• Ի՞նչ հատկանիշներով կարող եք նկարագրել նրանց:</i></p> <p><i>• Ինչպիսի՞ թույլ և ուժեղ կողմեր ունեն նրանք:</i></p> <p><i>• Սմենից շատ ի՞նչը հավանեցիք հեքաթ-խաղում:</i></p>	<p><i>Մրագրոհ</i></p> <p><i>Դիտում</i></p> <p><i>Խաղի մեթոդ</i></p> <p><i>Կշռադատման մեթոդ</i></p>
<p>10 րոպե</p>	<p>Լսում են ուսուցչի հարցերը և ամփոփում նոր թեման:</p>	<p>Մատչելի ձևով բացատրում է տնային առաջադրանքները և հարցերով ամփոփում այն:</p>		
<p>5րոպե</p>		<p>Գնահատում և տն. Աշխատանքի հանձնարարում:</p>		

Տն. առաջադրան ք	«Անհաղթ արևորը» հեքիաթը վարժ կարդալ և դերերով ներկայացնել:			
--------------------------------	---	--	--	--

--	--	--	--	--

